Գավառ համայնքի համայնքային սոցիալական ծրագիր՝

Աջակցության քարտի տրամադրում

Գավառի համայնքապետարանի աշխատակազմի կողմից իրականացվող կարճաժամկետ ծրագիր

Ծրագրի համառոտ նկարագրությունը

Աջակցության քարտից կարող են օգտվել Գավառ համայնքի ղեկավարին դիմած

1. Գավառ համայնքի բնակիչները, ովքեր հաշվառված են կամ վերջին 2 տարում փաստացի բնակվում են համայնքում:
2. ԼՂ-ից բռնի տեղահանվածները, ովքեր փաստացի բնակվում են համայնքում:

Սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների բարելավման գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի տված դրական եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացված սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշումամբ աջակցության քարտը է տրամադրվում Գավառ համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված խոցելի ընտանիքներին:

Աջակցության քարտը՝ քարտ է, որի միջոցով անձին կամ ընտանիքին մատուցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված սոցիալական ծառայություն սահմանված դրամական միջոցների շրջանակում:

Ծրագիրը միտված է Գավառի համայնքապետարանի աշխատակազմի կողմից կազմակերպությունների միջոցով ծառայություններ մատուցելուն դրանք են՝ սնունդի, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների, վառելանյութի, դեղերի, առաջին անհրաժեշտության կենցաղային այլ ապրանքների, ինչպես նաև տրանսպորտի կամ փոխադրման առաջին անհրաժեշության կարիքները:

Սույն ծրագրով նախատեսված է աջակցել Գավառ համայնքի՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին և հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում հայտնված անձանց կամ ընտանիքներին բավարարելու իրենց հիմնական պահանջմունքները ՝ անձի կամ ընտանիքի բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ նվազագույն պարագաների՝ սնունդի, հագուստի, դեղերի, կոշիկի և հիգիենայի պարագաների ձեռքբերումը:

Ծրագրի իրականացման շրջանակում նախատեսվում է սոցիալական աջակցությունը տրամադրել աջակցության քարտերի միջոցով:

Հնարավոր շահառուները կարող են լինել միայնակ կամ անժառանգ տարեց կամ հաշմանդամության առաջին կամ երկրորդ խումբ կամ անձի ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակում ունեցող կամ տեղաշարժման ֆիզիոլոգիական խնդիրներ ունեցող անձինք, ինչպես նաև անօթևան կամ բնակության վայր չունեցող, աղքատություն, անապահովություն կամ գործազրկություն ունեցող, բռնության կամ ընտանեկան և կենցաղային բռնության կամ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկվելու կամ

հանցագործությունից տուժած անձինք,պրոբացիայի շահառու հանդիսանալու փաստով:

Ծրագրի անվանումը՝ Աջակցության քարտերի տրամադրում

Խնդիր՝ որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության սոցիալական պաշտպանություն
Ծրագրի նպատակը	Աջակցության քարտի միջոցով սոցիալական աջակցություն տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին և հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում հայտնված անձանց կամ ընտանիքներին: Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ, 8-րդ և 13-րդ ենթակետում ներկայացված իրավիճակների:
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Սահմանել նախատեսված աջակցությունը տրամադրող կազմակերպությունների ընտրության չափանիշները (Կազմակերպություններ՝ խանութներ, դեղատներ, տաքսի ծառայություններ, բանկեր) 2. Իրականացնել նշված չափանիշներին բավարարող առևտրային, ծառայություն մատուցող կազմակերպությունների ընտրությունը: 3. Կազմակերպությունների հետ ստորագրել համապատասխան կարգավորումներ պարունակող պայմանագրեր: 5. Իրականացնել դիմումների ուսումնասիրություն, կարիքի գնահատում , ուղղորդում, մոնիթորինգ: 6.Իրականացնել ծրագրի հաշվետվողականության մեխանիզմներ:
Ծրագրի հիմնական արդյունքներ	1. Գավառ համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին և հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում հայտնված անձանց կամ ընտանիքների հիմնական կարիքները բավարարված լինելն է: 2.Աջակցության քարտերի միջոցով նախատեսվում է բավարարել թվով 150 շահառուների կարիքները:
Ծրագրիրը իրականացվելու է	1. Համայնքի հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված անձանց կամ

	ընտանիքներին աջակցություն տրամադրելու համար համապատասխան ապրանքները կամ ծառայությունները տրամադրող կազմակերպություններն ընտրվելու են ՀՀ օրենքով սահմանված կարգով և նրանց հետ ստորագրվում են պայմանագրեր: 2.Շահառուների ընտրության չափորոշիչները և ընթացակարգերը մշակված և հաստատված են: Անհրաժեշտ փաստաթղթերի ձևաչափերը մշակված են և հաստատված: 3.Շահառուների ընտրության չափանիշները կարգավորվում է կարիքների գնահատման արդյունքներով, որը հաստատված է ավագանու որոշմամբ:
Կնքված պայմանագրերի թիվը	Նշել պայմանագրերը կնքելուց հետո
Ծրագրի բյուջեն	Կազմում է 3 000 000 / երեք միլիոն/ ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Կգնահատվեն ծրագիրն իրականացնելու ընթացքում
Ծրագրի հիմնական ռիսկերը	Չկանխատեսված իրավիճակ, որը պայմանավորնած կլինի աղետի ռիսկով, կենաբանական /համաճարակ, անասնահամաճարակ/ վտանգավոր երևույթներով, ինչպես նաև զենքի տեսակների կիրառմամբ:
Ծրագրի հիմնական շահառուները	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին և հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված անձինք կամ ընտանիքները *(անհրաժեշտության դեպքում հստակեցվում է՝ առաջնահերթությունը տալով կրկնակի խոցելիություն ունեցող անձանց՝ բազմազավակ ընտանիքներին, հղի կանանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, տեղահանված անձանց, տարեցներին, հաշմանդամություն կամ անձի ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող անձանց, այլ)*
Ծրագրի սկիզբ և ավարտ	2025 թ. մարտ - 2025 թ. դեկտեմբեր